

<https://doi.org/10.46991/hc.2023.20.2.201>

### Features of Using the “Mosaic” Method

Meri Hovhannisyan

<https://orcid.org/0000-0002-7467-7087>

Academic Secretary of Yerevan State University,

Ph.D. in Philology

[meri.hovhannisyan@ysu.am](mailto:meri.hovhannisyan@ysu.am)

**Keywords:** teaching process, teaching technology, teaching method, the “Mosaic”, the principles of interactive teaching, cooperative teaching, educational and expert groups, interaction and mutual influence, self-expression, cooperation abilities, feedback.

*The purpose of the study is to clearly define the “Mosaic” method, its rules, stages of implementation and features of application in a university course of the Armenian language. The objective of the study is to reveal the essence of the “Mosaic” method, the advantages and limitations of the indicated method, the pedagogical problems that arise when applying the methods and the ways of their solution.*

*General scientific logical, as well as the private or special methods of analysis and comparison have been used during the comprehensive study of the problem put forward within the framework of the topic.*

*The principles of cooperative teaching: interaction and mutual learning, students’ activities, collaboration, encouragement of self-expression and feedback create conditions for students’ activities, their motivation, self-expression, interaction and cooperation. At different stages of the “Mosaic”, i.e. at the stages of the study of material and collection of information, the work in expert and educational groups, final work and generalization, conditions are created for students’ cooperation, the exchange of thoughts and ideas, which is aimed not only at the solution of a particular educational problem, but at the development of interpersonal communication skills and the free expression of one’s own viewpoint, the evaluation of one’s own work and the work of other students, as well as the ability to appreciate what one has learned.*

*In expert and educational groups, the students work with each other, express their opinions, exchange ideas, being guided in their interaction rather by the principle of cooperation than by the principle of competition. Each member of the expert group realizes their educational goals and objectives with the assistance of others, simultaneously supporting them in the achievement of their own goals and objectives. In the given case, cooperation is not limited only to discussions, analysis and is organized on the*

History and Culture, Vol.-2(20), 2023, pp. 201-208.



Received: 15.10.2023

Revised: 16.11.2023

Accepted: 15.12.2023

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2023

*basis of the principles of mutual learning, which becomes a basis for the formation and application of other principles: the principles of self-expression and feedback.*

*After conducting the research, we came to the conclusion that the capabilities of the “Mosaic” method contribute to a comprehensive study of the proposed material, the formation of interactive competence and cooperation, the development of expert abilities, and the fact that the student simultaneously becomes a teacher. Such limitations of the method as insufficient quantity of necessary resources, mismatch of interests, the volume of work and time can be overcome also by using other teaching techniques.*

### «Խճանկար» մեթոդի կիրառության առանձնահատկությունները

#### Մերի Հովհաննիսյան

ԵՊՀ գիտական քարտուղար, ք.գ.թ., դոցենտ

**Հիմնաբառեր՝** ուսումնական գործընթաց, ուսուցման տեխնոլոգիա, ուսուցման մեթոդ, «Խճանկար», փոխգործուն ուսուցման սկզբունքներ, համագործակցային ուսուցում, ուսումնական ու փորձագիտական խմբեր, փոխներգործություն ու փոխազդեցություն, ինքնարտահայտում, համագործակցային կարողություններ, հետադարձ կապ:

*Մեր ուսումնասիրության նպատակն է հստակորեն սահմանել «Խճանկար» մեթոդը, կանոնները, իրականացման փուլերն ու կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում: Ուսումնասիրության խնդիրն է բացահայտել «Խճանկարի» սկզբունքների էությունը, նշված մեթոդով իրականացվող աշխատանքի առավելությունները, սահմանափակումները, մեթոդների կիրառման ժամանակ դրսևորվող մանկավարժական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:*

*Թեմայի շրջանակում առաջադրված խնդրի համապարփակ ուսումնասիրության ընթացքում կիրառվել են գիտական ընդհանուր՝ տրամաբանական, ինչպես նաև մասնավոր կամ հատուկ՝ վերլուծության, համեմատության մեթոդներ:*

*Համագործակցային ուսուցման սկզբունքները՝ փոխազդեցությունն ու փոխուսուցումը, սովորողների ակտիվությունը, համագործակցությունը, ինքնարտահայտման խրախուսումն ու հետադարձ կապը, պայմաններ են ստեղծում սովորողների ակտիվության, մոտիվացիայի, ինքնարտահայտման, փոխազդեցության ու համագործակցության համար: «Խճանկարի» տարբեր փուլերում՝ նյութի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքում, աշխատանք փորձագիտական ու ուսումնական խմբերում, ավարտական աշխատանք ու ամփոփում, սովորողների համար պայմաններ են ստեղծվում համագործակցության, մտքերի, գաղափարների*

Խրախուսման ու փոխանակման՝ նպատակաուղղվելով ոչ միայն ուսումնական որևէ խնդրի լուծմանը, այլև միջանձնային, սեփական տեսակետն ազատորեն արտահայտելու հմտությունների, իր ու դասընկերոջ աշխատանքը գնահատելու, սովորածը արժևորելու կարողությունների զարգացմանը: Փորձագիտական ու ուսումնական խմբերում սովորողներն աշխատում են միմյանց հետ՝ արտահայտելով կարծիքներ, փոխանակելով գաղափարներ, որոնք բնորոշվում են ոչ թե մրցակցային, այլ համագործակցային փոխազդեցությամբ: Փորձագիտական խմբի յուրաքանչյուր անդամ իրագործում է իր ուսումնական նպատակներն ու խնդիրները մյուսների աջակցությամբ՝ միննույն ժամանակ օգնելով նրանց իրագործել իրենց նպատակներն ու խնդիրները: Այս դեպքում համագործակցությունը չի սահմանափակվում միայն քննարկումներով, վերլուծություններով և կազմակերպվում է փոխուսուցման սկզբունքներով, որոնք էլ հիմք են դառնում մյուս սկզբունքների՝ ինքնարտահայտման ու հետադարձ կապի ձևավորման ու կիրառման համար:

Իրականացնելով ուսումնասիրությունը՝ հանգել ենք այն եզրակացության, որ «Խճանկար» մեթոդի հնարավորությունները նպաստում են առաջադրված նյութը տարբեր կողմերից ուսումնասիրելուն, լսարանում փոխգործունության, համագործակցության ձևավորմանը, փորձագիտական կարողությունների մշակմանն ու զարգացմանը, միաժամանակ սովորող ու սովորեցնող դառնալուն: Մեթոդի առաջ բերած սահմանափակումները՝ անհրաժեշտ ռեսուրսների ոչ բավարար քանակ, հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի ու ժամանակի անհամապատասխանությունը, հնարավոր է հաղթահարել՝ կիրառելով նաև ուսուցման այլ հնարներ:

### **Особенности использования метода «мозаики»**

**Мери Оганнисян**

Канд. филолог. наук,

ученый секретарь Ереванского государственного университета

**Ключевые слова:** процесс обучения, технология обучения, метод обучения, «Мозаика», принципы интерактивного обучения, кооперативное обучение, учебные и экспертные группы, взаимодействие и взаимовлияние, самовыражение, способности к сотрудничеству, обратная связь.

*Цель исследования – четко определить метод «Мозаика», его правила, этапы осуществления и особенности применения в вузовском курсе армянского языка. Задача исследования – раскрыть сущность метода «Мозаика», преимущества и ограничения указанного метода, имеющие место при применении методов педагогические проблемы и пути их разрешения.*

*При комплексном изучении проблемы, выдвинутой в рамках темы, использовались общенаучные логические, а также частные или специальные методы анализа и сравнения.*

*Принципы кооперативного обучения: взаимодействие и взаимное обучение, активность учащихся, сотрудничество, поощрение самовыражения и обратная связь - создают условия для активности учащихся, их мотивации, самовыражения, взаимодействия и сотрудничества. На разных этапах «Мозаики»: этапах изучения материала и сбора информации, работы в экспертных и учебных группах, итоговой работы и обобщения - создаются условия для сотрудничества учащихся, обмена мыслями и идеями, что направлено не только на решение той или иной учебной задачи, но и на развитие навыков межличностного общения и свободного выражения собственной точки зрения, оценки своей работы и работы других учащихся, способности ценить то, чему научился.*

*В экспертных и учебных группах учащиеся работают друг с другом, выражают мнения, обмениваются идеями, руководствуясь при взаимодействии не принципом конкуренции, а принципом кооперации. Каждый член экспертной группы реализует свои учебные цели и задачи при содействии других, одновременно помогая им в достижении их собственных целей и задач. В данном случае сотрудничество не ограничивается только дискуссиями, анализом и организуется на основе принципов взаимного обучения, которые становятся основой формирования и применения других принципов: принципов самовыражения и обратной связи.*

*После проведения исследования мы пришли к выводу, что возможности метода «Мозаика» способствуют разностороннему изучению предложенного материала, формированию интерактивной компетенции и сотрудничества, развитию экспертных способностей, тому, что учащийся становится одновременно и обучающим. Такие ограничения метода, как недостаточное количество необходимых ресурсов, несоответствие интересов, объема работы и времени, можно преодолеть посредством применения также и других приемов обучения.*

\* \* \*

**Ներածություն:** Ժամանակի հրամայականով պայմանավորված՝ ուսումնական գործընթացում առանցքային դեր ունեն ուսուցման տեխնոլոգիաները, որոնք սովորողներին բացատրական պասիվ ուսուցումից փոխադրում են ակտիվ ուսուցում՝ առավել իրատեսական դարձնելով ուսուցման արդյունավետությունը: «Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան ենթադրում է սովորողների ակտիվ գործունեություն՝ խմբային հաղորդակցման հիման վրա կազմակերպված ուսուցում: Այս պայմաններում սովորողն իր պահանջունքներով, հետաքրքրություններով դառնում է ուսումնական գործընթացի ակտիվ մասնակից, որն ունակ է գիտակցելու ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, հմտությունների, անձնային որակների, արժեքային կողմնորոշիչների նշանակությունը, սոցիալական հմտությունների կարևորությունը արդի աշխարհում, գիտելիքների ձեռքբերման, ամրապնդման, իրական կյանքում դրանց կիրառման, սոցիալական և ինքնաճանաչման հմտությունների զարգացման գործում համագործակցային ու խմբային աշխատանքի հմտությունների կարևորությունը՝ որպես հասարակության մեջ անհատի ինքնադրսևորման ապահովման միջոց» [Հովհաննիսյան Մ., էջ 147-148]: Ասել է թե՛ ուսուցումը համագործակցային կլիմի այն դեպքում, երբ աշակերտները միասին, գույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար [Խաչատրյան Ս. Գ., էջ 18]:

Համագործակցային ուսուցման ժամանակ մանկավարժը ստանձնում է ուղղորդողի դեր՝ վերահսկելով ուսումնական գործընթացը: Ասել է թե՛ համագործակցային ուսուցման տարբեր բովանդակող մեթոդները՝ «Խճանկար», «Շրջագայություն պատկերասրահում», «Հինգրուպեանոց ազատ շարադրանք», «Սովորողների թիմային առաջադիմություն» և այլն, նպաստում են ուսումնական տարբեր խնդիրներ լուծելու և համագործակցային կարողությունների զարգացմանը, սովորողների սոցիալականացմանը: Համագործակցային ուսուցումը նպաստում է նաև ուսումնառության նկատմամբ սովորողների մոտեցումների բարելավմանը: Ինչպես ցույց է տալիս պրակտիկան, միասին սովորելը ոչ միայն դյուրին ու հետաքրքիր է, այլև ստեղծագործական կարողությունների դրսևորում է ենթադրում [Slavin R. E., pp. 315-316]:

«Խճանկարը» («Ջիգսոն»)՝ որպես ուսուցման մեթոդ, հայտնագործվել է XX դարավերջին ամերիկացի սոցիոլոգ, հոգեբան Էլիոթ Արոնսոնի կողմից [https://aronson.socialpsychology.org/]: Մեթոդն ունեցել է հստակ նպատակ՝ թուլացնել ռասայական խմբավորումների ուժը բռնի ինտեգրված ուսումնական հաստատություններում: Հետագայում ընդլայնվել են մեթոդի կիրառման հնարավորությունները, ըստ այդմ՝ նաև նպատակները.

1. նպաստել առաջադրված նյութի ուսումնասիրմանը տարբեր կողմերից՝ հնարավորություն ընձեռելով դիտարկելու տարբեր աղբյուրներ,
2. համագործակցաբար գտնել ուսումնական խնդիրների լուծումները,
3. սովորողներին հնարավորություն տալ՝ հանդես գալու և՛ սովորողի, և՛ սովորեցնողի դերում,
4. սովորողների մեջ ձևավորել ու զարգացնել համագործակցային, փորձագիտական կարողություններ:

Սովորողները խորամուկ են լինում ուսումնական հիմնախնդիրների մեջ՝ համագործակցային խմբերով միմյանց հետ աշխատելով: Նյութն ուսումնասիրվում է առանձնաբար, հատվածաբար ու միավորվում խմբային աշխատանքների արդյունքներով:

**Հոդվածի շրջանակում իրականացվող հետազոտության նպատակը:** Հետազոտության նպատակն է մեթոդաբանորեն «Խճանկար» մեթոդի կիրառման առանձնահատկությունները հայոց լեզվի բուհական դասընթացում՝ մեթոդական քայլաշարի միջոցով ընդգծելով ուսուցման ժամանակ երևան եկող խնդիրները, դժվարությունները ու առաջարկելով դրանց լուծման ուղիներ:

**Հետազոտության նորույթը:** Վեր են հանվել «Խճանկար» մեթոդի կիրառման առանձնահատկությունները՝ մեթոդական նպատակային ու հաջորդական քայլերի իրացմամբ:

**Հիմնական շարադրանք:** Ինչպես ուսուցման ժամանակակից այլ մեթոդներ, «Խճանկարը» ևս ուսումնական գործընթացում կիրառվում է փուլային սկզբունքով: Նախ առանձնացվում են համագործակցային խմբերը, այնուհետև առաջադրվում են ուսումնական խնդիրները:

Առաջին փուլ	Նյութի ուսումնասիրում	Սովորողները բաժանում են հենակետային խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ
-------------	-----------------------	---

		ենթաթեմայի փորձագետ:
Երկրորդ փուլ	Աշխատանք փորձագիտական խմբում	Համագործակցային խմբերի փորձագետները համեմատում են ենթաթեմաները, հարստացնում իրենց ուսումնասիրած նյութերը:
Երրորդ փուլ	Աշխատանք ուսումնական խմբում	Փորձագետները հենակետային խմբի անդամներին սովորեցնում են իրենց ուսումնասիրած ենթաթեմաները:
Չորրորդ փուլ	Ավարտական աշխատանք	Սովորողները հանձնում են իրենց կատարած աշխատանքը:
Հինգերորդ փուլ	Արդյունքների ամփոփում	Ըստ անհատական ու խմբային ցուցանիշների՝ իրականացվում է արդյունքների ամփոփում:

Աղյուսակ 1. «Խճանկար» մեթոդի փուլերը

Ժամանակն արդյունավետ օգտագործելով՝ մանկավարժը սովորողներին ներառում է 4-5 անդամից բաղկացած հետակետային խմբերում: Ուսուցանվող թեման առանձնացնում է հատվածաբար, ըստ ենթաթեմաների՝ հանձնարարություններ տալիս համագործակցային խմբերում ներառված սովորողներին՝ հաշվի առնելով նրանց հետաքրքրություններն ու ցանկությունները: Հաջորդ քայլաշարում համագործակցային խմբերի մասնակիցներին տրվում են համարներ: Նույն համարներն ունեցող սովորողները միավորվում են փորձագիտական նոր խմբերում: Ըստ ենթաթեմաների՝ փորձագիտական խմբերին տրվում են հանձնարարություններ: Յուրաքանչյուր անդամ պատասխանատու է դառնում կոնկրետ թեմայի կամ ենթաթեմայի համար: Մեթոդի ամփոփիչ քայլը փորձագետների վերադարձն է համագործակցային խմբեր, ինչպես նաև խմբային աշխատանքի ներկայացումը, որի հիման վրա էլ կատարվում է գնահատումը:

«Խճանկարը» թիմային առաջադիմության մեթոդից տարբերվում է նրանով, որ սովորողները խորամուկ են լինում ուսումնական նյութի որոշակի ենթաթեմայի հիմնախնդիրների մեջ՝ ուսուցանելով համագործակցային խմբի մյուս անդամներին: Ուսումնական պարապմունքները կազմակերպվում են այնպես, որ աշխատանքի յուրաքանչյուր

պահին բոլոր սովորողները զբաղված լինեն իրենց հանձնարարված խնդրով: Ուսումնական տվյալ խնդրի կատարման համար բոլորին հասկացվում է միևնույն ժամաքանակը: Սովորողների միջև կազմակերպվում է արդյունավետ փոխազդեցություն:

Դիտարկենք «Խճանկարի» կիրառության օրինակ հայոց լեզվի բուհական դասընթացում: «Բայի խոնարհում» թեմայի ուսուցումը փոխգործուն տարբեր մեթոդներով (պրոբլեմային հարցեր, մտազրոհ, Վենի գծապատկեր, T-աձև ու M-աձև աղյուսակներ) իրականացնելուց հետո առաջին քայլաշարում լսարանում ձևավորում ենք հենակետային 3 խումբ: Խմբի յուրաքանչյուր անդամ դառնում է որևէ ենթաթեմայի փորձագետ: Այս փուլում ուսանողներն ուսումնասիրում են բայի խոնարհման համակարգը ու փորձում են տարբեր աղբյուրներից ու հարթակներից հավաքագրել բայաձևերի սխալ գործածություններ, զուգաձևություններ՝ բացատրելով դրանց կազմության ու կիրառության առանձնահատկությունները: Պրոբլեմային հարցերի միջոցով նյութերի հավաքագրման ու վերլուծության փուլում փորձագետները խթանում են համագործակցային աշխատանքը՝ դրսևորելով ակտիվություն:

Հենակետային մյուս խմբին հանձնարարվում է ուսումնասիրել բայի անդամ ձևերը՝ դերբայները՝ դիտարկելով դրանց կազմության ու կիրառության առանձնահատկությունները, սխալ գործածությունները, անորոշ ու վաղակատար, անորոշի սեռականի ու ապակատար դերբայների տարբերակման սկզբունքները:

Հենակետային երրորդ խումբը նույն սկզբունքով ուսումնասիրում է բայի քերականական կարգերը:

Խճանկարի երկրորդ՝ նյութերի համալրման ու համեմատման փուլում համագործակցային խմբերի փորձագետները համեմատում են ենթաթեմաները, հարստացնում իրենց ուսումնասիրած նյութերը:

Փորձագետները հենակետային խմբի անդամներին սովորեցնում են իրենց ուսումնասիրած ենթաթեմաները: Մեթոդի ամփոփիչ քայլն այն է, որ փորձագետները վերադառնում են համագործակցային խմբեր ու հաշվետվություն տալիս իրենց ուսումնասիրած, յուրացրած նյութի մասին՝ հանդես գալով սովորեցնողի դերում: Ներկայացվում են խմբային քննարկումների արդյունքները, սովորողները իրենց ուսանածը սովորեցնում են միմյանց, միավորվում, ամբողջանում են գիտելիքները:

Սովորողները հանձնում են իրենց կատարած աշխատանքը: Իրականացվում է արդյունքների ամփոփում: Սովորողները խմբային համագործակցության միջոցով աշխատում են միևնույն թեմայի շուրջ առանձին ուղղություններով, որից հետո բոլոր խմբերի համագործակցային աշխատանքի արդյունքները միավորվում են:

<p>-Ն-, -Չ- սուկածանցները վաղակատար ներկա, վաղակատար անցյալ, անցյալ կատարյալ, հրամայական ապառնի ժամանակաձևերում դուրս են ընկնում: Մխալաձևություններ են՝ <i>սառում է, կպնում է, թռնում է, փախնում է</i> (փոխարենը՝ <i>սառչում է, կպչում է, թռչում է, փախչում է</i>):</p>	<p>Ձեռքերս սառչում են:</p> <p>Ձեռքերս սառել են:</p> <p>Աղավնին թռչում է:</p> <p>Աղավնին թռել է:</p>
---	---

<p>Ենթակայական դերքայը Ե խոնարհման բայերի դեպքում ստանում է -ոդ վերջավորությունը, ինչպես՝ վազել-վազող, գրել-գրող, հետևաբար <i>խոսացող</i> կազմությունը սխալաձևություն է:</p>	<p>խոսել – խոսող նստել-նստող</p>
<p>Ե խոնարհման պարզ բայերը ստանում են պատճառական -ԵՑՆ- ածանցը, հետևաբար սխալ են կազմված <i>նստացնել</i>, <i>խոսացնել</i> և այլ բայաձևեր:</p>	<p>նստել-նստեցնել խոսել-խոսեցնել վազել-վազեցնել</p>
<p>Չեզոք սեռի բայերը չեն կարող ստանալ կրավորական -Վ- ածանցը: Սխալ են <i>զանգվել</i>, <i>խրախուսվել</i> և այլ բայերի կիրառությունները:</p>	<p>զանգել խաչակնքել</p>

Աղյուսակ 2.

**Ամփոփում:** Այսպիսով՝ «Խճանկար» մեթոդի կիրառումը հայոց լեզվի բուհական դասընթացում հնարավորություն է տալիս զարգացնելու համագործակցային, սովորածը գնահատելու ու արժևորելու կարողությունները, սեփական տեսակետն ազատորեն արտահայտելու և այլ հմտություններ:

«Խճանկար» մեթոդը կիրառման լայն հնարավորություններ ունի. կարող է կիրառվել տարբեր թեմաների ուսուցման ժամանակ: Նպատակահարմար է կիրառել ծավալուն ու տվյալներով հագեցած նյութերի վրա աշխատելիս ինչպես իմաստի ընկալման, այնպես էլ կշռադատման փուլերում: Մեթոդի առավելություններն են նյութի բազմակողմանի ուսումնասիրությունը, ժամանակի արդյունավետ օգտագործումը, ուսումնական գործընթացում մոտիվացիայի ստեղծումը, համագործակցային կարողությունների զարգացումը: Մեթոդի սահմանափակումներից են հետաքրքրությունների, աշխատանքի ծավալի ու ժամանակի անհամապատասխանությունը:

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**

Հովհաննիսյան Մ., Համագործակցային ուսուցման տեխնոլոգիայի կիրառումը հայոց լեզվի բուհական դասընթացում //«Կրթությունը 21-րդ դարում», Երևան, 2023, 1(9):

Խաչատրյան Ս. Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006:

Slavin R. E. (1990), Cooperative learning. Review of Educational Research, Prentice Hall, Englewood Cliffs.

Elliot Aronson, <https://aronson.socialpsychology.org/>, դիտումը՝ 15.09.23: